ՎԵՆԵՏԻԿՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ստրասբուրգ, 5 մարտ, 2009 թ.

Եզրակացություն թիվ 520/2009

CDL(2009)042*
Բնօրինակը՝ միայն անգլերեն
Ոչ պաշտոնական հայերեն
թարգմանություն

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԻՋՈՑՈՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

(ՎԵՆԵՏԻԿՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ 2009 Թ. ՓԵՏՐՎԱՐԻՆ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ

Կազմվել է հետևյալ փորձագետների մեկնաբանությունների հիման վրա.
Պրն. Ջեյմս ՀԵՄԻԼԹՈՆ (անդամի փոխարինող, Իռլանդիա)
Պրն. Գիդո ՆԵՊԻ ՄՈԴՈՆԱ (անդամի փոխարինող, Իտալիա)

** Սույն փաստաթուղթը հրապարակման օրվա դրությամբ դասակարգվել է որպես սահմանափակ շրջանառության փաստաթուղթ: Եթե Վենետիկյան հանձնաժողովի կողմից այլ որոշում չի կայացվել, ապա փաստաթուղթը հրապարակումից մեկ տարի հետո գաղտնազերծվում է՝ Եվրոպայի խորհրդի փաստաթղթերի հասանելիության մասին CM/Res(2001)6 բանաձևի կանոններին համապատասխան:*

Սույն փաստաթուղթը հանդիպման ընթացքում չի բաժանվելու: Խնդրում ենք Ձեզ հետ բերել այս օրինակը:
www.venice.coe.int

I. Ներածություն

1. Հայաստանի Հանրապետությունը հանձնառել է փոփոխել քրեական օրենսգրքի 225 և 300 հոդվածները՝ ապահովելու ԵԽԽՎ 1609 (2008) և 1620 (2008) բանաձևերով սահմանված իր պարտավորությունների կատարումը:

2. 2009 թ. հունվարի 22-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի Նախագահն Ազգային ժողովում ստեղծել է աշխատանքային խումբ, որը պետք է մեկամսյա ժամկետում, Եվրոպայի խորհրդի համապատասխան մարմինների (մասնավորապես՝ Վենետիկյան հանձնաժողովի և Մարդու իրավունքների հանձնակատարի) համագործակցությամբ, մշակեր Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 225 և 300 հոդվածների փոփոխությունների նախագիծ (տես ԵԽԽՎ 1643 (2009) բանաձև, կետ 6):

3. Վերոհիշյալ աշխատանքային խմբի նախագահ պրն. Դավիթ Հարությունյանը անմիջապես հայցեց Վենետիկյան հանձնաժողովի օգնությունը: Պրն. Հեմիլթոնը, գործելով որպես զեկուցող, 2009 թ. փետրվարի 2-ին Թբիլիսիում հանդիպեց պրն. Հարությունյանին՝ քննարկելու տվյալ խնդիրը:

4. Վենետիկյան հանձնաժողովի քարտուղարության կողմից իրականացվել և անհապաղ պրն. Հարությունյանին էր ուղարկվել եվրոպական այլ երկրների նմանատիպ դրույթների համեմատական վերլուծություն:

5. 2009 թ. փետրվարի 19-ին պրն. Հարությունյանը դիմել է Վենետիկյան հանձնաժողովին, որպեսզի վերջինս փորձագիտական եզրակացություն ներկայացնի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի փոփոխությունների նախագծի (CDL(2009)040) վերաբերյալ, որը նրա աշխատանքային խումբը ներկայացրել էր խորհրդարանին: Նրա դիմումը պարունակում էր նաև չորս հարցեր.

> *«Հարց 1. Ենթադրենք, որ 225 հոդվածի վերոհիշյալ բաժիններն ուժի մեջ են մտնում դատարանում քրեական գործի քննության ընթացքում: Եթե նկարագրված իրավիճակը տեղի ունենար Ձեր երկրում, ի՞նչ հետագա քայլեր կձեռնարկվեին:*
>
> *Օրինակ.*
> *ա. Դատախազը կամ դատարանը գործով մեղադրանքը կհամապատասխանեցնեին նոր դիսպոզիցիային, և գործի դատական քննությունը կշարունակվեր:*
> *բ. Դատախազը կհրաժարվեր մեղադրանքից միայն այն փաստի հիման վրա, որ քրեական օրենսգրքով նախատեսված՝ արարքի սահմանումը փոփոխվել է, և մեղադրյալների նկատմամբ կկայացվեր արդարացման դատավճիռ:*
> *գ. Մեղադրանքը կշարունակվեր նախկին դիսպոզիցիայի հիման վրա:*
>
> *Հարց 2. Ի՞նչ իրավիճակում պետք է գտնվեն այն անձինք, ովքեր 225 հոդվածի վերոհիշյալ փոփոխությունների ուժի մեջ մտնելու պահի դրությամբ արդեն դատապարտվել են նույն հանցագործությունների համար:*

Հարց 3. Ձեր կարծիքով, 225 հոդվածը կարո՞ղ է վերոհիշյալ փոփոխությունից հետո համարվել նոր «քրեական իրավախախտում, որը փոփոխությունից առաջ ազգային օրենսդրությամբ չի հանդիսացել քրեական իրավախախտում» (ՄԻԵԿ-ի 7-րդ հոդվածի իմաստով):

Հարց 4. Կարո՞ղ ենք ասել, որ քրեական օրենսգրքի փոփոխությունների դեպքում պետք է գործի ընդհանուր կանոն, որի համաձայն, կատարված ցանկացած արարքի համար կարող է իրականացվել քրեական հետապնդում, եթե.
ա. Այն համարվել է հանցագործություն նախքան փոփոխությունները, ԵՎ
բ. Այն համարվում է հանցագործություն նաև փոփոխություններից հետո:

6. Պրն. Հարությունյանը խնդրել էր, որպեսզի Վենետիկյան հանձնաժողովը փորձագիտական եզրակացություն ներկայացնի նաև 225-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերի վերաբերյալ, որոնք առաջարկվել էին նրա նրա աշխատանքային խմբի կողմից, սակայն խորհրդարանը դրանք մերժել էր:

7. 2009 թ. փետրվարի 26-ին Հայաստանի խորհրդարանն առաջին ընթերցմամբ ընդունեց փոփոխությունների նախագիծը:

8. Սույն եզրակացությունը, որը կազմվել է պարոնայք Հեմիլթոնի և Նեպի Մորոնայի մեկնաբանությունների հիման վրա, ուղարկվել է Հայաստանի իշխանություններին 2009 թ. մարտի 5-ին, որից հետո հաստատվել է Վենետիկյան հանձնաժողովի կողմից _____-րդ լիագումար նիստի ընթացքում (Վենետիկ, …):

II. Ընդհանուր տեղեկություններ

9. Դիտարկվող փոփոխությունները հիմնականում վերաբերում են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի երեք դրույթների. Հոդված 225՝ «Զանգվածային անկարգությունները», որով նախատեսվում է.

1. Զանգվածային անկարգություններ կազմակերպելը, որոնք ուղեկցվել են բռնությամբ, ջարդերով, հրկիզումներով, գույք ոչնչացնելով կամ վնասելով, հրազեն, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր գործադրելով կամ իշխանության ներկայացուցչին զինված դիմադրություն ցույց տալով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից տասը տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքներն անմիջականորեն կատարելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից ութ տարի ժամկետով:

3. Զանգվածային անկարգությունների ժամանակ իշխանության ներկայացուցչի օրինական պահանջին ակտիվորեն չենթարկվելու կամ զանգվածային անկարգությունների կամ անձանց նկատմամբ բռնություն կիրառելու կոչերը՝ պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից վեցհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

Հոդված 300՝ «Պետական իշխանությունը յուրացնելը», որով նախատեսվում է.

1. Պետական իշխանությունը յուրացնելը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության խախտմամբ պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն կամ դա բռնությամբ պահելուն, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ տապալելուն կամ Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությունը բռնությամբ խախտելուն ուղղված գործողությունները՝ պատժվում են ազատազրկմամբ՝ տասից տասնհինգ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածում նշված գործողությունների մասին իշխանության մարմիններին կամովին հայտնած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հայտնելու արդյունքում ձեռնարկված միջոցառումների շնորհիվ դրանց իրականացումը կանխվել է:

և Հոդված 301՝ «Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելուն ուղղված հրապարակային կոչերը», որով նախատեսվում է.

Պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն, Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելուն ուղղված հրապարակային կոչերը՝ պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

10. Վենետիկյան հանձնաժողովը նախկինում վերլուծել է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 301 և 225 հոդվածները: Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի խնդրանքով Հանձնաժողովը 301 հոդվածն առաջին անգամ գնահատել է կիրառելի եվրոպական չափանիշների (մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի) լույսի ներքո և եզրակացրել, որ այդ դրույթը, ըստ երևույթին, անհամատեղելի չէ ՄԻԵԿ-ին՝ «պայմանով, որ այն պատշաճ կերպով մեկնաբանվի և կիրառվի» (CDL-AD(2007)043):

11. Հանձնաժողովն այդուհետ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովից ստացել էր խնդրանք՝ գնահատելու ՀՀ քրեական օրենսգրքի 301 հոդվածի և 225 հոդվածի 1-ին մասի փոփոխությունների որոշակի նախագիծ: Հանձնաժողովն այն ժամանակ եզրակացրել էր, որ առաջարկված փոփոխությունները չափազանց ընդգրկուն են, կարող են չարաշահումների տեղիք տալ, և խորհուրդ էր տվել դրանք չընդունել (CDL-AD(2008)017):

12. Հանձնաժողովն ընդգծում է, որ դիտարկվող դրույթների փոփոխությունների հիմնական նպատակն ոչ այնքան դրանք եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելն է (Հանձնաժողովը եզրակացրել է, մասնավորապես, որ 301 հոդվածը չի շեղվում այդ չափանիշներից), որքան՝ դրանք ավելի մանրամասնորեն ձևակերպելը, որպեսզի նվազեցվի դրանց մեկնաբանության մեջ հնարավոր չարաշահումների ռիսկը:

13. Մասնավորապես, այդ փոփոխությունները կարճաժամկետ հատվածում կոնկրետ նպատակ են հետապնդում: 2008 թ. մարտի 1-ի և 2-ի իրադարձություններից հետո (նախագահական ընտրության արդյունքների դեմ անցկացվող բողոքի ցույցերի առիթով տեղի ունեցած բախումներ, որոնց հետևանքով 10 հոգի էր զոհվել) 300 հոդվածի հիման վրա մեղադրանք է ներկայացվել 28 անձի, այդ թվում՝ ընդդիմության 7 ակտիվիստների, ում գործերը վերջերս ուղարկվել են դատարան, և ովքեր իշխանությունների կողմից համարվում

են մարտի 1-ի և 2-ի իրադարձությունների «պարագլուխները»: Ընդհանուր թվով 79 անձի մեղադրանք է ներկայացվել 225 հոդվածով, ընդ որում՝ նրանցից 19-ին (ներառյալ վերոհիշյալ 7-ը)՝ 225 հոդվածի 3-րդ մասով:

14. Հայաստանի խորհրդարանը մտադիր է փոփոխություններ կատարել 225 և 300 հոդվածներում և հարակից այլ դրույթներում, որպեսզի դրանք ենթակա լինեն ավելի նեղ մեկնաբանության և ավելի հստակ դառնան: Այնքանով, որքանով նշված փոփոխությունների արդյունքում համապատասխան դրույթներն ավելի բարենպաստ կդառնան մեղադրյալների համար, ուժի մեջ մտնելուց հետո դրանք օրենքի հետադարձ ուժով, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 22 և 42 հոդվածների համաձայն, կտարածվեն ընդդիմության յոթ ակտիվիստներին ներկայացված մեղադրանքի նկատմամբ: Սահմանադրության վերոհիշյալ հոդվածներով նախատեսվում է հետևյալը.

Հոդված 22
Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ: Օրենքը կարող է նախատեսել ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու այլ դեպքեր:
Արգելվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը:
Արգելվում է նշանակել ավելի ծանր պատիժ, քան կարող էր կիրառվել հանցագործության կատարման պահին գործող օրենքով:
Մարդուն չի կարելի հանցագործության համար մեղավոր ճանաչել, եթե արարքի կատարման պահին գործող օրենքով այն հանցագործություն չի համարվել:
Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ:
Պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող օրենքը հետադարձ ուժ չունի:
Ոչ ոք չի կարող կրկին անգամ դատվել նույն արարքի համար:

Հոդված 42
Սահմանադրությամբ ամրագրված մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքները եւ ազատությունները չեն բացառում օրենքներով եւ միջազգային պայմանագրերով սահմանված այլ իրավունքներ եւ ազատություններ:
Յուրաքանչյուր ոք ազատ է կատարելու այն, ինչն արգելված չէ օրենքով եւ չի խախտում այլոց իրավունքները եւ ազատությունները: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:
Անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները եւ այլ իրավական ակտեր հետադարձ ուժ չունեն:
Անձի իրավական վիճակը բարելավող, նրա պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:

III. Առաջարկվող փոփոխությունների վերլուծությունը

a) Հոդված 300. Իշխանությունը յուրացնելը

15. Առաջարկվող փոփոխությունները, ըստ ամենայնի, ընդունելի են: Դրանցում պատշաճ կերպով սահմանվում են երկու առանձին հանցագործություններ՝ իշխանությունը զավթելը և իշխանությունը պահելը: Անձը տվյալ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից ազատվում է, եթե նախքան հանցավոր արարքների տեղի ունենալը դրանց մասին կամավոր հայտնել է իրավապահ մարմիններին՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք այդ տեղեկությունների արդյունքում արարքները կանխվել են, թե ոչ. դա ողջունելի մոտեցում է:

b) Հոդված 300.1. Սահմանադրական կարգը տապալելը

16. Այս նոր դրույթը, որով համալրվում է նախորդը, ամրագրելով առանձին հանցագործություն՝ սահմանադրական կարգը տապալելը, նույնպես, ըստ ամենայնի, ընդունելի է: Հոդվածով իրավացիորեն նախատեսվում է իրավապահ մարմիններին կամավոր հայտնելու դեպքում անձին քրեական պատասխանատվությունից ազատելը՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք այդ տեղեկությունների արդյունքում արարքները կանխվել են, թե ոչ:

c) Հոդված 300.2. Տարածքային ամբողջականությունը խախտելը

17. Այս նոր դրույթի անգլերեն տեքստում առկա է անհստակություն. պարզ չէ, թե արդյոք հոդվածը սահմանափակվում է բռնություն գործադրելու միջոցով առանձնացնելով կամ հանձնելով: Պետք է հստակորեն ձևակերպել, որ «բռնություն» բառը վերաբերում է ողջ տեքստին, այլ ոչ՝ միայն հանձնելուն («հանձնելը»՝ որպես «առանձնացնելուց» տարբերվող գործողություն): Մարդիկ պետք է ազատ լինեն՝ պահանջելու խաղաղ միջոցներով հանձնելը կամ առանձնացնելը:

d) Հոդված 301. Հրապարակային կոչերը

18. Այս դրույթը պետք է սահմանափակել, որպեսզի տարածվի միայն համապատասխան արարքները բռնությամբ, ուժով կամ անօրինական միջոցներով կատարելու կոչերի նկատմամբ:

e) Հոդված 301.1. Պարտադրելը

19. Այս նոր դրույթով նախատեսվում է նոր հանցատեսակ՝ Հանրապետության Նախագահին, Ազգային ժողովին, Կառավարությանը և Սահմանադրական դատարանին պարտադրելը, որը պատժվում է ավելի մեղմ պատժով, քան պետական իշխանությունը յուրացնելը, քանի որ բռնությունն այս դեպքում ուղղված չէ իշխանությունը զավթելուն: Դրույթը, ըստ երևույթին, ընդունելի է, չնայած որ պատիժը (երեքից տասնհինգ տարի), կարծես, բավական խիստ է:

f) Հոդված 225. Զանգվածային անկարգությունները

20. Ողջունելի է 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչելը: Այդ պարբերությամբ նախատեսվում է ծանրացուցիչ հանգամանք, որը կախված չէ կյանքից զրկելու դիտավորությունից:

Զանգվածային անկարգությունների ընթացքում դիտավորությամբ կյանքից զրկելն այժմ նախատեսված է 104 հոդվածով (տես ստորև՝ 23-րդ կետը):

21. 5-րդ մասում անհրաժեշտ է նախատեսել զանգվածային անկարգությանը մասնակցելու իմացության կամ դիտավորության պահանջ, օգտագործելով, օրինակ, հետևյալ բառերը. «Գիտակցաբար զանգվածային անկարգությանը մասնակցելը»: Ողջունելի է այն նորմը, որի համաձայն քրեական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, ով հեռանում է, երբ միջոցառումը վերածվում է անկարգությունների, չնայած որ ոչ բոլոր դեպքերում է հեշտ լինելու պարզել, թե արդյոք նա հեռացել է խաղաղ միջոցառման՝ զանգվածային անկարգության վերածվելուց առաջ, թե հետո:

g) Հոդված 225.1. Հրապարակային միջոցառում կազմակերպելը

22. Եթե 2-րդ մասը վերաբերում է ոստիկանության միայն օրինական պահանջին, ապա այս դրույթը, կարծես, նորմալ է:

h) Հոդված 104. Սպանությունը

23. Այս դրույթը, կարծես, ընդունելի է: Անգլերեն տեքստում «Fanatism» բառի փոխարեն հարկ է օգտագործել «Fanaticism» (բառացի՝ «մոլեռանդություն») բառը:

IV. Չորս հարցադրումների պատասխանները

A. Ընդհանուր դիտարկումներ

24. Պրն. Հարությունյանի կողմից Վենետիկյան հանձնաժողովին ուղղված հարցերն անհրաժեշտ է դիտարկել «*lex posterior derogat priori*» իրավական սկզբունքի շրջանակում՝ քրեական իրավունքի մեջ օրինականության ընդհանուր սկզբունքի ֆոնին: Օրինականության սկզբունքից բխող հիմնարար հասկացություններն են մեղսագրող քրեական նորմերի հետադարձ կիրառության բացառումը (այսինքն, պակաս բարենպաստ նորմի՝ «*in malam partem*», հետադարձ կիրառության բացառումը) և առավել բարենպաստ քրեական օրենքների հետադարձ կիրառությունը («*in bonam partem*» հետադարձ կիրառություն):

25. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածով նախատեսվում է.

Պատիժ՝ բացառապես օրենքի հիման վրա

1. Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը, կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, քրեական հանցագործություն չի համարվել: Չի կարող նաև նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի է եղել քրեական հանցագործության կատարման պահին:

2. Սույն հոդվածը չի խոչընդոտում ցանկացած անձի դատի տալ և պատժել որևէ գործողության կամ անգործության համար, որը կատարվելու պահին, քաղաքակիրթ ազգերի կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքներին համապատասխան, համարվել է քրեական հանցագործություն:

26. ՄԻԵԿ-ի 7-րդ հոդվածով չի պահանջվում, որպեսզի երաշխավորվի մեղադրյալի՝ հանցագործությունը կատարելուց պահից մինչև դատական քննության պահը տեղի ունեցած՝ օրենքի բարենպաստ փոփոխությունից օգտվելու իրավունքը: Ի հակադրություն, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 15(1) հոդվածով ուղղակիորեն պահանջվում է, որպեսզի մեղադրյալի համար երաշխավորվի ավելի ուշ տեղի ունեցած ցանկացած բարենպաստ փոփոխությունից օգտվելու իրավունքը՝ կիրառելի պատժի առումով:[1]

27. Այնուհանդերձ, չնայած որ 7-րդ հոդվածով արգելվում է քրեական իրավունքի հետադարձ կիրառությունն ի վնաս մեղադրյալի, այն չի արգելում քրեական իրավունքի հետադարձ կիրառությունը *մեղադրյալի համար ավելի բարենպաստ մասով («in bonam partem»)*:[2]

28. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված է թե քրեական օրենքի՝ մեղադրյալի համար պակաս բարենպաստ նորմերի հետադարձ կիրառության արգելքը, թե քրեական օրենքի՝ մեղադրյալի համար ավելի բարենպաստ նորմերի հետադարձ կիրառության սկզբունքը (տես վերը՝ 14-րդ կետը): Ուստի, մնում է պարզել, թե արդյոք 225 հոդվածի առաջարկվող նոր ձևակերպումը կարող է որակվել որպես «ավելի բարենպաստ մեղադրյալի համար», և թե որքանով է կարելի այն կիրառել հետադարձ կարգով:

29. Առավել բարենպաստ քրեական օրենքի հետադարձ կիրառության սկզբունքը չի վերաբերում միայն այն դեպքին, որում ավելի ուշ ընդունված քրեական օրենքով նախատեսվում է, որ կոնկրետ արարքն այլևս քրեական հանցագործություն չէ, կամ որ այն պատժվում է պակաս ծանր պատժով: Այն վերաբերում է նաև այն դեպքին, որում ավելի ուշ ընդունված քրեական օրենքը որևիցե առումով ավելի բարենպաստ է մեղադրյալի համար. օրինակ, երբ այն ավելի շատ է երաշխավորում օրինականության սկզբունքը և ապահովում հանցագործության, մասնավորապես՝ հանցակազմի տարրերի ավելի հստակ և միանշանակ սահմանումներ՝ այդպիսով նվազեցնելով կոնկրետ քրեական նորմի կիրառության մեջ դատախազի կամ դատավորի չափազանց մեծ հայեցողության կամ կամայականության հնարավորությունը:

30. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի գործող 225-րդ հոդվածի 1-ին մասով (տես վերը՝ 9-րդ կետը) քրեականացվում է «բռնությամբ զուգորդված զանգվածային անկարգությունները», սակայն չի նախատեսվում «զանգվածային անկարգություններ» հասկացության սահմանում, և պարզ չէ, թե ժամանակային կամ տարածական ինչ կապ պետք է գոյություն ունենա «զանգվածային անկարգության» և «բռնության, ջարդերի, հրկիզումների և գույք ոչնչացնելու կամ վնասելու» միջև: Նույն հոդվածի 2-րդ մասն աղոտ է

---

[1] Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 15-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է. «Ոչ ոք չի կարող հանցագործության համար մեղավոր ճանաչվել, եթե գործողության կամ անգործության պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն դա հանցագործություն չի համարվել: Նմանապես, չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառման էր ենթակա քրեական հանցագործության կատարման պահին: Եթե հանցագործության կատարվելուց հետո օրենքով ավելի մեղմ պատիժ է սահմանվում, այդ օրենքի գործողությունը տարածվում է տվյալ հանցագործի վրա»:

[2] Տես ՄԻԵԴ-ի դատավճիռը G.C.-ն ընդդ. Ֆրանսիայի գործով (ECtHR, G.C. v. France), 27 սեպտեմբեր, 1995 թ., §§ 22-27:

և անպարզ, քանի որ «սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքներն անմիջականորեն կատարելը» արտահայտությունը պետք է ավելի հստակորեն վերաբերի այն անձի գործողություններին, ով կատարել է բռնի արարքներ՝ ինքը չհանդիսանալով անկարգությունների կազմակերպիչ:

31. Չնայած որ խորհրդարանի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված տարբերակը ներառում է միայն 3-րդ մասի ուժը կորցնելը և նոր 5-րդ մասի ավելացումը, աշխատանքային խումբը փոփոխություններ է առաջարկել նաև 225 հոդվածի մյուս մասերում.

> *1. Զանգվածային անկարգություններ՝ բռնությամբ, ջարդերով, հրկիզումներով, գույք ոչնչացնելով կամ վնասելով, հրազեն, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր գործադրելով կամ իշխանության ներկայացուցչին զինված դիմադրություն ցույց տալով արտահայտված և հասարակական անվտանգությանը սպառնացող խմբային գործողություններ, կազմակերպելը պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից տասը տարի ժամկետով:*
>
> *2. Զանգվածային անկարգությունների ժամանակ մասնակցի կողմից բռնություն գործադրելը, ջարդ կամ հրկիզում իրականացնելը, գույք ոչնչացնելը կամ վնասելը, հրազեն, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր գործադրելը կամ իշխանության ներկայացուցչին զինված դիմադրելը պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից ութ տարի ժամկետով, եթե այդ արարքները կատարելն ինքնին չի առաջացնում սույն օրենսգրքի այլ հոդվածներով ավելի խիստ պատասխանատվություն:*
>
> *4. Զանգվածային անկարգություններ հրահրելուն ուղղված կոչերը, ինչպես նաև զանգվածային անկարգությունների ժամանակ իշխանության ներկայացուցչի օրինական պահանջին ակտիվորեն չենթարկվելու կամ անձանց նկատմամբ բռնություն կիրառելու կոչերը՝ պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից վեցհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:*

32. Հոդվածի 2-րդ մասում առաջարկվող փոփոխությունները համահունչ են օրինականության սկզբունքին, քանի որ հստակորեն և ճշգրտորեն սահմանում են հանցակազմի տարրերը: Առաջին պարբերության մեջ սահմանվում է «զանգվածային անկարգության» հասկացությունը, այսինքն՝ բռնության, հրկիզման խմբային գործողությունները և այլն, իսկ երկրորդ պարբերության մեջ հստակեցվում է կապը զանգվածային անկարգությունների և բռնի արարքների միջև, որոնք պետք է գործադրված լինեն անկարգությունների ժամանակ՝ մասնակցի կողմից, ով դրանց կազմակերպիչը չէ: Ակնհայտ է, որ առաջին պարբերությամբ պահանջվում է, որպեսզի քրեական պատասխանատվության ընդհանուր նորմերից ելնելով ապացուցվի կամ «զանգվածային անկարգություններ» առաջացնելու մտադրությունը, կամ միջոցառման՝ զանգվածային անկարգություններ ներառելու մասին իմացությունը. դա, սակայն, ավելի լավ կլիներ ուղղակիորեն ձևակերպել:

33. Հոդվածի 4-րդ մասում առաջարկվող փոփոխության մեջ առավել մանրամասնեցվում են այն հանցագործությունները, որոնք ներկայումս նախատեսված են 225 հոդվածի 3-րդ մասով: Կոչերը, որոնք, ենթադրաբար, հրահրելու, դրդելու և առաջարկելու գործողություններ են,

հոդվածի տեքստում անորոշ են և անպարզ. ուստի, օրինականության սկզբունքն ապահովելու իմաստով նախընտրելի կլիներ այս պարբերությունն ընդհանրապես հանել:

34. Համապատասխան հանցագործությունների համար նախատեսված սանկցիաները չեն փոփոխվել:

35. Քրեական օրենսգրքի 225 հոդվածում առաջարկող փոփոխությունների առավել բարենպաստ բնույթը պայմանավորված է նրանով, որ հանցակազմի տարրերն առավել հստակորեն և միանշանակորեն են սահմանված. ուստի, կամրապնդվեն այն երաշխիքները, որոնք դատախազին կամ դատավորին թույլ չեն տա դրույթը մեկնաբանելիս կիրառել չափազանց մեծ հայեցողություն կամ կամայականություն: Օրինականության սկզբունքի հիմնական երաշխիքն այն է, որ սկզբունքը ցանկացած անձի հնարավորություն է ընձեռում հստակորեն և ճշգրտորեն նախապես իմանալ, թե որ արարքներ են արգելված: Որքան մանրամասնորեն են քրեական օրենսդրությամբ նախատեսվում հանցակազմի տարրերը, այնքան նվազում է դատախազի կամ դատավորի կողմից տվյալ հանցագործության մեկնաբանությունը կամայականորեն ընդլայնելու ռիսկը: Որքան աղոտ է և անորոշ հանցագործության սահմանումը, այնքան ավելի բարձր է չհիմնավորված ռեպրեսիաների և քաղաքական խտրականության նպատակով այն կիրառելու ռիսկը:

B. <u>Կոնկրետ հարցադրումների պատասխանները</u>

Հարց 1.

Ենթադրենք, որ 225 հոդվածի վերոհիշյալ բաժիններն ուժի մեջ են մտնում դատարանում քրեական գործի քննության ընթացքում: Եթե նկարագրված իրավիճակը տեղի ունենար Ձեր երկրում, ի՞նչ հետագա քայլեր կձեռնարկվեին:
Օրինակ.
ա. Դատախազը կամ դատարանը գործով մեղադրանքը կհամապատասխանեցնեին նոր դիսպոզիցիային, և գործի դատական քննությունը կշարունակվեր:
բ. Դատախազը կհրաժարվեր մեղադրանքից միայն այն փաստի հիման վրա, որ քրեական օրենսգրքով նախատեսված՝ արարքի սահմանումը փոփոխվել է, և մեղադրյալների նկատմամբ կկայացվեր արդարացման դատավճիռ:
գ. Մեղադրանքը կշարունակվեր նախկին դիսպոզիցիայի հիման վրա:

36. Այն պետություններում, որոնցում նախատեսվում է քրեական օրենքի հետադարձ ուժն ավելի բարենպաստ նորմերի մասով, օրինակ՝ Իտալիայում կամ Հայաստանում,[3] գործի վարույթը կշարունակվեր նոր օրենքի հիման վրա, եթե, իհարկե, նոր օրենքն ավելի բարենպաստ է մեղադրյալի համար (իմիջիայլոց, Վենետիկյան հանձնաժողովի կարծիքով, 225-րդ հոդվածի առաջարկվող նոր տարբերակի դեպքում այդպես է. տես վերը՝ 35-րդ կետ): Դատախազը և դատավորն են գնահատում, թե արդյոք նոր՝ ավելի բարենպաստ նորմի հիման վրա մեղադրյալի նկատմամբ կարող է կայացվել մեղադրական կամ արդարացման

[3] Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 22-րդ հոդված, Իտալիայի քրեական օրենսգրքի 2-րդ հոդված: Քրեական օրենսդրության ավելի բարենպաստ նորմերի հետադարձ կիրառության սկզբունքն ամրագրող սահմանադրությունների և քրեական օրենսգրքերի լրացուցիչ օրինակների համար տես սույն եզրակացության Հավելվածը:

դատավճիռ: Բնականաբար, նոր օրենքը չի կարող կիրառվել, եթե, փոխելով հանցագործության բովանդակությունը, արդյունքում կքրեականացվեր այնպիսի գործողություն, որը քրեական օրենքի դրույթի մեջ սկզբնապես ներառված չէր. այդ դեպքում դատական քննությունը պետք է շարունակվեր նախկին օրենքի հիման վրա:

37. Գործը կփակվեր միայն այն դեպքում, եթե նոր օրենքով ուժը կորցրած ճանաչվեր նախկին օրենքը. այդ իմաստով, նախկին օրենքում միայն փոփոխություններ կատարելը բավարար չէ գործը փակելու համար:

38. Իռլանդիայում, եթե օրենքի նորմի բովանդակությունը փոփոխվեր, գործը, հավանաբար, կշարունակվեր նախկին օրենքի հիման վրա, չնայած որ տեսականորեն հնարավոր կլիներ ընդունվող նոր օրենքին տալ հետադարձ ուժ, որպեսզի սահմանափակվի հանցագործության շրջանակը (օրինակ՝ նախատեսելով քրեական պատասխանատվությունից ազատման որոշակի հիմք, որը նախկինում չի եղել, կամ դատախազից պահանջելով, որպեսզի նա ապացուցի հանցակազմի մեկ այլ՝ լրացուցիչ տարրի առկայությունը ևս. կարող էր ավելացվել, օրինակ, նոր դրույթ, որով կնախատեսվեր, որ «անձը չի կարող X բաժնով նախատեսված հանցագործության մեջ մեղավոր ճանաչվել, եթե չի ապացուցվել, որ հանցանքը կատարելու պահին ...», կամ՝ «X բաժնով նախատեսված հանցագործության համար նախատեսված քրեական պատասխանատվությունից անձը կարող է ազատվել, եթե ապացուցի, որ ...»: Այլ կերպ ասած, նոր հանցագործությունը կարող էր լինել նախկինի ավելի սահմանափակ տարբերակը, և չէր քրեականացվի որևէ արարք, որն արարքի փաստացի կատարման պահին քրեականացված չէր եղել): Պատժաչափի նվազեցման դեպքում նախկինի փոխարեն կգործեր նոր օրենքը: Օրենքն ուժը կորցրած ճանաչելը, որպես կանոն, չի անդրադառնում արդեն քննվող գործով (քաղաքացիական կամ քրեական) վարույթի շարունակման վրա:

Հարց 2.

Ի՞նչ իրավիճակում պետք է գտնվեն այն անձինք, ովքեր 225 հոդվածի վերոհիշյալ փոփոխությունների ուժի մեջ մտնելու պահի դրությամբ արդեն դատապարտվել են նույն հանցագործությունների համար:

39. Եթե նոր օրենքի հիման վրա նախկին օրենքը ոչ թե ուժը կորցրած է ճանաչվում, այլ՝ պարզապես փոփոխվում, նրանց նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռները (եթե դրանք արդեն մտել են օրինական ուժի մեջ) մնում են անփոփոխ՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք երկրում գործում է ավելի բարենպաստ քրեական օրենքի հետադարձ կիրառության սկզբունքը:

40. Իսկ եթե 225-րդ հոդվածի նոր տարբերակով հոդվածի նախկին դրույթն ուժը կորցրած է ճանաչվում, ապա Հայաստանի և Իտալիայի նման պետություններում վերացվում են նույնիսկ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռները:[4]

---

[4] Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 12-րդ հոդվածով նախատեսվում է հետևյալը.

«Քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում

1. Արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով:

Հարց 3.

Ձեր կարծիքով, 225 հոդվածը կարո՞ղ է վերոհիշյալ փոփոխությունից հետո համարվել նոր «քրեական իրավախախտում, որը փոփոխությունից առաջ ազգային օրենսդրությամբ չի հանդիսացել քրեական իրավախախտում» (ՄԻԵԿ-ի 7-րդ հոդվածի իմաստով):

41. ՄԻԵԿ-ի 7-րդ հոդվածը, որն իրավունքի գերակայության հիմնական բաղադրիչներից է, նպատակ է հետապնդում արդյունավետ երաշխիքներ նախատեսել՝ ընդդեմ կամայական հետապնդման, դատապարտման և պատժի:[5] Դրա կարևորության մասին է վկայում այն փաստը, որ Կոնվենցիայի 15-րդ հոդվածի համաձայն այդ նորմից որևէ շեղում թույլատրելի չէ: Այն մարմնավորում է հետևյալ ընդհանուր սկզբունքը. հանցագործությունները պետք է նախատեսված լինեն օրենքով, և անձը պետք է ի վիճակի լինի համապատասխան դրույթի ձևակերպումից, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև դատարանների կողմից դրան տված մեկնաբանության հիման վրա, իմանալ, թե որ գործողությունների և անգործության համար ինքը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության:

---

2. Հանցանքը կատարելու ժամանակ է համարվում հանրության համար վտանգավոր գործողությունը (անգործությունը) իրականացնելու ժամանակը՝ անկախ հետևանքները վրա հասնելու պահից»:

13-րդ հոդվածով նախատեսվում է.

«Քրեական օրենքի հետադարձ ուժը

1. Արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն:

2. Արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը հետադարձ ուժ չունի:

3. Պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող և միաժամանակ պատասխանատվությունը մասնակիորեն խստացնող օրենքը հետադարձ ուժ ունի միայն այն մասով, որը մեղմացնում է պատասխանատվությունը»:

Իտալիայի քրեական օրենսգրքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է. «Ոչ ոք չի կարող պատժվել այնպիսի արարքի համար, որն ավելի ուշ ընդունված օրենքի համաձայն քրեական հանցագործություն չէ, իսկ եթե կայացվել է մեղադրական դատավճիռ, ապա այն՝ իր հետևանքներով հանդերձ, պետք է վերացվեն»: 4-րդ մասով նախատեսվում է. «Եթե հանցանքը գործելու պահին գործող օրենքը տարբերվում է ավելի ուշ ընդունված օրենքից, ապա ավելի բարենպաստ օրենքը կիրառվում է միայն այն դեպքում, երբ վերջնական վճիռը դեռ չի կայացվել»: Տես նաև Ալբանիայի քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածը:

[5] Տես ՄԻԵԴ, SW-ն ընդդեմ Միացյալ Թագավորության (ECtHR, SW v. UK), 1995 թ. նոյեմբերի 22-ի դատավճիռ, պարբերություն 34. «Կոնվենցիայի 7-րդ հոդվածում ամրագրված երաշխիքը, որն իրավունքի գերակայության հիմնական բաղադրիչներից է, շատ կարևոր տեղ է զբաղեցնում Կոնվենցիայով նախատեսված պաշտպանությունների համակարգում, որի վկայությունն է այն փաստը, որ Կոնվենցիայի 15-րդ հոդվածի համաձայն այդ նորմից որևէ շեղում թույլատրելի չէ պատերազմի կամ հանրային այլ արտակարգ իրավիճակի պայմաններում: Այն պետք է այնպես մեկնաբանել և կիրառել, որ, հաշվի առնելով տվյալ սկզբունքի նպատակը և խնդիրը, հնարավոր լինի արդյունավետ երաշխիքներ նախատեսել՝ ընդդեմ կամայական հետապնդման, դատապարտման և պատժի»:

42. Կոնվենցիայի 7-րդ հոդվածով նախատեսվում է քրեական իրավունքի հետադարձ կիրառության արգելք, որից շեղումները (դեռոգացիա) արգելված են: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը պարզաբանել է.[6]

> *«Կոնվենցիայի 7-րդ հոդվածում ընդհանուր գծերով մարմնավորվում է այն սկզբունքը, որը հանցագործությունը և դրա համար պատիժը կարող են սահմանվել միայն օրենքով («nullum crimen, nulla poena sine lege»), ինչպես նաև այն սկզբունքը, որ քրեական օրենքը չպետք է տարածական մեկնաբանության ենթարկվի՝ ի վնաս մեղադրյալի, օրինակ՝ անալոգիայի միջոցով»:*

43. Ինչպես նշվեց (տես վերը՝ 24-25 կետեր), ՄԻԵԿ-ի 7-րդ հոդվածով, ի տարբերություն ՔՔԻՄԴ-ի 15(1) հոդվածի, մեղադրյալն իրավունք չի ստանում օգտվել օրենքի իր համար բարենպաստ այն փոփոխություններից, որոնք տեղի են ունեցել հանցանքը կատարելու և դատական քննության միջև ընկած ժամանակահատվածում, սակայն չի էլ արգելվում քրեական օրենքի ավելի նպաստավոր դրույթների հետադարձ կիրառությունը:[7]

44. Քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի նոր դրույթների հետադարձ կիրառությամբ ՄԻԵԿ-ի 7-րդ հոդվածը չէր խախտվի, եթե դրա շնորհիվ մեղադրյալը կհայտնվեր ակնհայտորեն ավելի բարենպաստ իրավիճակում (Վենետիկյան հանձնաժողովի կարծիքով, այս դեպքում հենց այդպես է): Տվյալ ռիսկից կարելի է խուսափել նաև՝ կիրառելով այնպիսի ձևակերպումներ, ինչպիսք առաջարկված են, օրինակ, սույն եզրակացության 38-րդ կետում:

Հարց 4.

Կարո՞ղ ենք ասել, որ քրեական օրենսգրքի փոփոխությունների դեպքում պետք է գործի ընդհանուր կանոն, որի համաձայն, կատարված ցանկացած արարքի համար կարող է իրականացվել քրեական հետապնդում, եթե.

ա. Այն համարվել է հանցագործություն նախքան փոփոխությունները, ԵՎ
բ. Այն համարվում է հանցագործություն նաև փոփոխություններից հետո:

45. Առաջնորդվելով «*lex posterior derogat priori*» սկզբունքով, փոփոխությունների ընդունումից <u>առաջ</u>՝ գործող նախկին օրենքի պայմաններում կատարված արարքների քրեական հետապնդումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է, որպեսզի արարքները հանցագործություն համարվեն թե նախկին, թե նոր օրենքներով:

46. Այնուհանդերձ, հաշվի առնելով հետադարձության կարգով արարքների քրեականացման արգելքը, նոր օրենքը կկիրառվի միայն այն դեպքում, երբ այն ավելի բարենպաստ է մեղադրյալի համար. եթե նոր օրենքն ավելի բարենպաստ չէ, ապա կշարունակի կիրառելի մնալ նախկին օրենքը:

---

[6] Տես ՄԻԵԴ, Կոկինակիսն ընդդեմ Հունաստանի (ECtHR, Kokkinakis v. Greece), 1993 թ. մայիսի 25-ի դատավճիռ, պարբերություն 52:

[7] Տես ՄԻԵԴ, G.C.-ն ընդդեմ Ֆրանսիայի (ECtHR, G.C. v. France), 1995 թ. սեպտեմբերի 27-ի դատավճիռ, պարբերություններ 22-27:

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրոպական պետությունների սահմանադրությունների կամ քրեական օրենսգրքերի դրույթներ, որոնցով նախատեսվում է ավելի բարենպաստ օրենքի հետադարձ կիրառության սկզբունքը

ԱԼԲԱՆԻԱ

Սահմանադրություն, հոդված 29

1. Ոչ ոք չի կարող մեղադրվել կամ մեղավոր ճանաչվել այնպիսի քրեական հանցագործության համար, որն օրենքով նախատեսված չի եղել դրա կատարման պահին, բացառությամբ այնպիսի հանցագործությունների, որոնք դրանց կատարման պահին հանդիսացել են պատերազմական հանցագործություններ կամ մարդկության դեմ ուղղված հանցագործություններ՝ ըստ միջազգային իրավունքի նորմերի:
2. Չի կարող նշանակվել պատիժ, որն ավելի ծանր է, քան այն պատիժը, որն օրենքով նախատեսված է եղել քրեական հանցագործության կատարման պահին:
3. Բարենպաստ քրեական օրենքն ունի հետադարձ կիրառություն:

Քրեական օրենսգիրք, հոդված 3. Քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում

1. Ոչ ոք չի կարող դատապարտվել այնպիսի արարքի համար, որը դրա կատարման պահին գործող օրենքի համաձայն չի եղել քրեական արարք:
2. Քրեական արարքը չքրեականացնող նոր օրենքն ունի հետադարձ կիրառություն: Եթե անձի նկատմամբ կայացվել է մեղադրական դատավճիռ, ապա պատժի ի կատար ածումը չի կարող սկսվել, իսկ եթե այն սկսվել է, ապա դադարեցվում է:
3. Եթե քրեական արարքը կատարելու պահին գործող օրենքը տարբերվում է հետագայում ընդունված օրենքից, ապա անձի նկատմամբ կիրառվում է այն օրենքը, որի դրույթներն ավելի բբարենպաստ են քրեական արարքը կատարած անձի համար:

ԱՆԴՈՐՐԱ

Սահմանադրություն, հոդված 9, մաս 4

Ոչ ոք չի կարող քրեական կամ վարչական պատասխանատվության ենթարկվել այնպիսի գործողությունների կամ անգործության համար, որոնք դրանց կատարման պահին օրինական են եղել:

Քրեական օրենսգիրք, հոդված 5

La loi pénale n'a pas d'effet rétroactif, mais si la loi applicable au moment de la commission du délit est distincte de celle en vigueur au moment de la condamnation ou pendant la période intermédiaire, la loi la plus favorable à l'accusé sera appliquée.

ՀԱՅԱՍՏԱՆ

Սահմանադրություն, հոդված 22

Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ: Օրենքը կարող է նախատեսել ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու այլ դեպքեր:

Արգելվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը:

Արգելվում է նշանակել ավելի ծանր պատիժ, քան կարող էր կիրառվել հանցագործության կատարման պահին գործող օրենքով:

Մարդուն չի կարելի հանցագործության համար մեղավոր ճանաչել, եթե արարքի կատարման պահին գործող օրենքով այն հանցագործություն չի համարվել:

Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ:
Պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող օրենքը հետադարձ ուժ չունի:
Ոչ ոք չի կարող կրկին անգամ դատվել նույն արարքի համար:
Սահմանադրություն, հոդված 42
Սահմանադրությամբ ամրագրված մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքները եւ ազատությունները չեն բացառում օրենքներով եւ միջազգային պայմանագրերով սահմանված այլ իրավունքներ եւ ազատություններ:
Յուրաքանչյուր ոք ազատ է կատարելու այն, ինչն արգելված չէ օրենքով եւ չի խախտում այլոց իրավունքները եւ ազատությունները: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:
Անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները եւ այլ իրավական ակտեր հետադարձ ուժ չունեն:
Անձի իրավական վիճակը բարելավող, նրա պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:

Քրեական օրենսգիրք, հոդված 12. Քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում
1. Արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով:
2. Հանցանքը կատարելու ժամանակ է համարվում հանրության համար վտանգավոր գործողությունը (անգործությունը) իրականացնելու ժամանակը՝ անկախ հետևանքները վրա հասնելու պահից:

Քրեական օրենսգիրք, հոդված 13. Քրեական օրենքի հետադարձ ուժը
1. Արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն:
2. Արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը հետադարձ ուժ չունի:
3. Պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող և միաժամանակ պատասխանատվությունը մասնակիորեն խստացնող օրենքը հետադարձ ուժ ունի միայն այն մասով, որը մեղմացնում է պատասխանատվությունը:

ԱՎՍՏՐԻԱ
Քրեական օրենսգիրք, մասեր 1, 2. Պատիժ՝ բացառապես օրենքի հիման վրա
(1) Պատիժ կամ խափանման միջոց կարող է կիրառվել միայն այնպիսի գործողության համար, որի համար օրենքով ուղղակիորեն սահմանված է պատիժ, և որի համար արդեն սահմանված է եղել պատիժ գործողությունը կատարելու պահին:
(2) Չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, ինչ նախատեսված է եղել արարքը կատարելու պահին:

Քրեական օրենսգիրք, մաս 61. Ժամանակային վավերությունը
Քրեական օրենքները կիրառելի են միայն այն արարքների նկատմամբ, որոնք կատարվել են այդ օրենքների ուժի մեջ մտնելուց հետո: Քրեական օրենքները կիրառվում են դրանց ուժի

մեջ մտնելուց առաջ կատարված արարքի նկատմամբ, եթե արարքը կատարելու պահին գործող օրենքներն իրենց ամբողջության մեջ վերցված ավելի բարենպաստ չեն եղել արարքը կատարողի համար:

ԱԴՐԲԵՋԱՆ

Սահմանադրություն, հոդված 71. Մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը

(…)

VIII. Անձը պատասխանատվության չի կարող ենթարկվել այն արարքների համար, որոնք դրանց կատարման պահին քրեական չեն համարվել: Եթե հանցանքը գործելուց հետո ընդունվել է նոր օրենք, որով պատասխանատվություն չի նախատեսվում կամ նախատեսվում է ավելի մեղմ պատասխանատվություն, ապա կիրառվում է նոր օրենքը:

Քրեական օրենսգիրք, հոդված 10. Քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում

10.1. Արարքի (գործողության կամ անգործության) հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով: Ոչ ոք չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել այնպիսի արարքի համար, որը դրա կատարման պահին չի համարվել հանցագործություն:

10.2. Հանցանքը կատարելու ժամանակ է համարվում հանրության համար վտանգավոր գործողությունը (անգործությունը) իրականացնելու ժամանակը՝ անկախ հետևանքները վրա հասնելու պահից:

10.3. Արարքի (գործողության կամ անգործության) հանցավորությունը և դրա համար սահմանված պատիժը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն:

10.4. Արարքի (գործողության կամ անգործության) հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը հետադարձ ուժ չունի:

ԲՈՍՆԻԱ ԵՎ ՀԵՐՑՈԳՈՎԻՆԱ

Քրեական օրենսգիրք, հոդված 4

(1) Քրեական հանցագործություն կատարած անձի նկատմամբ տարածվում է այն օրենքը, որը գործել է քրեական հանցագործության կատարման պահին:

(2) Եթե քրեական հանցագործությունը կատարելուց հետո օրենքը մեկ կամ մի քանի անգամ փոխվել է, ապա հանցանքը գործած անձի նկատմամբ տարածվում է ավելի մեղմ օրենքը:

ԲՈՒԼՂԱՐԻԱ

Քրեական օրենսգիրք, հոդված 2

Հոդված 2. (1) Յուրաքանչյուր հանցագործության նկատմամբ տարածվում է այն օրենքը, որը գործել է դրա կատարման պահին:

(2) Եթե նախքան դատավճռի կայացումն ընդունվում է այլ օրենք, ապա տարածվում է այն օրենքը, որն ավելի բարենպաստ է հանցանքը գործած անձի համար:

ԿԻՊՐՈՍ

Սահմանադրություն, հոդված 12, մաս 1

Անձը չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել այնպիսի հանցավոր գործողության կամ անգործության համար, որը դրա կատարման պահին օրենքով չի

համարվել հանցագործություն: Անձի նկատմամբ հանցագործության համար չի կարող սահմանվել ավելի ծանր պատիժ, քան հանցանքը գործելու պահին օրենքով ուղղակիորեն սահմանված պատիժն է:

ԽՈՐՎԱԹԻԱ

Սահմանադրություն, հոդված 31

1. Ոչ ոք չի կարող պատժվել այնպիսի արարքի համար, որը դրա կատարումից առաջ օրենքով կամ միջազգային իրավունքի նորմերով սահմանված չի եղել որպես պատժելի արարք: Անձի նկատմամբ չի կարող նշանակվել այնպիսի պատիժ, որն օրենքով սահմանված չի եղել: Եթե արարքը կատարելուց հետո օրենքով սահմանվում է ավելի մեղմ պատիժ, ապա կիրառվում է վերջինս:

ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Քրեական օրենսգիրք, հոդված 16, 1-ին և 2-րդ մասեր

(1) Արարքի համար քրեական պատասխանատվությունը որոշվում է այն օրենքով, որը գործել է արարքը կատարելու պահին: Պատասխանատվությունը որոշվում է ավելի ուշ ընդունված օրենքի հիման վրա միայն այն դեպքում, երբ վերջինս ավելի բարենպաստ է հանցանքը գործած անձի համար:

(2) Հանցանքը գործած անձի նկատմամբ կարող է կիրառվել միայն այնպիսի պատիժ, որը նախատեսված է եղել քրեական հանցագործության վերաբերյալ դատավճիռ կայացնելու պահին գործող օրենքով:

ԷՍՏՈՆԻԱ

Սահմանադրություն, հոդված 23, 1-ին և 2-րդ մասեր

Ոչ ոք չի կարող մեղավոր ճանաչվել այնպիսի արարքի համար, որը նախատեսված չի եղել որպես քրեական հանցագործություն դրա կատարման պահին գործող օրենքով:

Ոչ ոքի նկատմամբ չի կարող կիրառվել ավելի ծանր պատիժ, քան այն պատիժը, որը կիրառելի է եղել հանցանքը գործելու պահին: Եթե հանցանքը գործելուց հետո օրենքով նախատեսվում է ավելի մեղմ պատիժ, ապա կիրառվում է վերջինս:

Քրեական օրենսգիրք, 14-րդ հոդվածի 5(2) մաս. Քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում

Արարքի համար քրեական պատասխանատվությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի:

ՖԻՆԼԱՆԴԻԱ

Սահմանադրություն, բաժին 8. Օրինականության սկզբունքը քրեական գործերով

Ոչ ոք չի կարող մեղավոր ճանաչվել և պատժվել քրեական հանցագործության համար այնպիսի արարքի հիման վրա, որն օրենքով պատժելի չի համարվել դրա կատարման պահին: Հանցագործության համար նշանակվող պատիժը չի կարող ավելի ծանր լինել, քան հանցանքը գործելու պահին օրենքով նախատեսված պատիժը:

ՖՐԱՆՍԻԱ

Քրեական օրենսգիրք, հոդված 112-1

Գործողությունը պատժելի է միայն այն դեպքում, երբ այն քրեական հանցագործություն է հանդիսացել կատարման պահին:

Կարող են նշանակվել միայն այն պատիժները, որոնք օրենքի համաձայն գործել են արարքը կատարելու ամսաթվի դրությամբ:

Այնուհանդերձ, նոր դրույթները կիրառելի են դրանց ուժի մեջ մտնելուց առաջ գործած հանցանքների նկատմամբ, որոնց համար դեռևս չեն կայացվել օրինական ուժի մեջ մտած դատավճիռներ, երբ նոր դրույթներն ավելի մեղմ են, քան նախկինում գործած դրույթները:

ՎՐԱՍՏԱՆ

Սահմանադրություն, հոդված 42, 5-րդ մաս

Ոչ ոք չի կարող պատասխանատվության ենթարկվել այնպիսի արարքի համար, որը դրա կատարման պահին չի հանդիսացել քրեական հանցագործություն: Օրենքը, որը չի մեղմացնում և չի վերացնում քրեական պատասխանատվությունը, չունի հետադարձ կիրառություն:

ԳԵՐՄԱՆԻԱ

Քրեական օրենսգիրք, բաժին 1. Պատիժ՝ բացառապես օրենքի հիման վրա

Արարքը կարող է պատժվել միայն այն դեպքում, երբ դրա պատժելիությունը սահմանված է եղել արարքը կատարելու պահին գործող օրենքով:

Բաժին 2. Ժամանակային կիրառությունը

(1) Պատիժը և դրա հետ կապված հետևանքները որոշվում են արարքը կատարման պահին գործող օրենքով:

(2) Եթե նախատեսված պատիժը փոփոխվում է արարքը կատարելու ընթացքում, ապա կիրառելի է այն օրենքը, որը գործում է արարքն ավարտելու պահին:

(3) Եթե արարքն ավարտելու պահին գործող օրենքը փոփոխվում է նախքան դատավճռի կայացումը, ապա կիրառվում է ամենամեղմ օրենքը:

(4) Օրենքը, որն ընդունված է եղել և գործել է միայն որոշակի ժամկետով, կիրառելի է դրա գործողության ընթացքում կատարված արարքների նկատմամբ, նույնիսկ եթե այն այլևս չի գործում: Այս նորմը չի գործում, եթե կոնկրետ օրենքով այլ բան է նախատեսված:

(5) Վերոհիշյալ (1)-(4) ենթաբաժինները կիրառելի են, համապատասխանաբար, բռնագրավման, բռնագանձման և անօգտագործելի ճանաչելու նկատմամբ:

(6) Եթե օրենքով այլ բան նախատեսված չէ, ապա ուղղիչ և խափանման միջոցներին առնչվող որոշումները կայացվում են այն օրենքի հիման վրա, որը գործել է դատավճիռը կայացնելու պահին:

ՀՈՒՆԱՍՏԱՆ

Քրեական օրենսգիրք, հոդված 7

1. Հանցավորությունը և պատժելիությունն առկա են միայն այն դեպքում, երբ դրանք օրենքով նախատեսված են եղել նախքան արարքի կատարումը գործող օրենքով, որով սահմանվում են հանցակազմի տարրերը: Պատիժը որևէ դեպքում չի կարող ավելի ծանր լինել, քան արարքի կատարման պահին սահմանված պատիժը:

ՀՈՒՆԳԱՐԻԱ

Սահմանադրություն, հոդված 57

(4) Ոչ ոք չի կարող մեղավոր ճանաչվել և պատժի ենթարկվել այնպիսի հանցագործության համար, որն այդ արարքը կատարելու պահին Հունգարիայի օրենքով չի համարվել քրեական հանցագործություն:

Քրեական օրենսգրքի 2-րդ բաժին

Հանցագործությունը դատվում է դրա կատարման պահին գործող օրենքի համաձայն: Եթե արարքի վերաբերյալ դատավճռի կայացման պահին գործող նոր քրեական օրենսգրքի համաձայն արարքն այլևս հանցագործություն չէ, կամ արարքի համար նախատեսված է

ավելի մեղմ պատիժ, ապա կիրառվում է նոր օրենքը. այլապես, նոր քրեական օրենսգիրքը հետադարձ կիրառություն չունի:

ԻՏԱԼԻԱ

Սահմանադրություն, հոդված 25

1. Ոչ ոք չի կարող հեռացվել օրենքով սահմանված բնական դատավորի մոտից:
2. Ոչ ոք չի կարող պատժվել, եթե հանցանքը գործելու պահին գործող օրենքով նման պատիժ նախատեսված չի եղել: (…)

Քրեական օրենսգիրք, հոդված 2

§ 2. Ոչ ոք չի կարող պատժվել այնպիսի արարքի համար, որն ավելի ուշ ընդունված օրենքի համաձայն քրեական հանցագործություն չէ, իսկ եթե կայացվել է մեղադրական դատավճիռ, ապա այն՝ իր հետևանքներով հանդերձ, պետք է վերացվեն:

§ 4. Եթե հանցանքը գործելու պահին գործող օրենքը տարբերվում է ավելի ուշ ընդունված օրենքից, ապա ավելի բարենպաստ օրենքը կիրառվում է միայն այն դեպքում, երբ վերջնական վճիռը դեռ չի կայացվել»: Տես նաև Ալբանիայի քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածը:

ԼԱՏՎԻԱ

Քրեական օրենսգիրք, բաժին 5. Քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում

(1) Արարքի (գործողության կամ անգործության) հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են դա կատարելու ժամանակ գործող օրենքով:

(2) Արարքի համար սահմանված պատիժը վերացնող, պատիժը մեղմացնող կամ անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը, եթե կիրառելի օրենքով այլ բան նախատեսված չէ, հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն:

(3) Արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը հետադարձ ուժ չունի:

(4) Անձը, ով կատարել է մարդկության կամ խաղաղության դեմ ուղղված հանցագործություն, պատերազմական հանցագործություն, կամ մասնակցել ցեղասպանության, պատժվում է՝ անկախ այդ արարքը կատարելու ժամանակից:

ԼԻՏՎԱ

Քրեական օրենսգիրք, հոդված 7, 2-րդ մաս

Արարքի պատժելիությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ արարքը կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ ունեն դատվածություն:

ՄՈԼԴՈՎԱ

Սահմանադրություն, հոդված 22. Օրենքի հետադարձ կիրառության արգելքը

Ոչ ոք չի կարող պատժի ենթարկվել այնպիսի գործողությունների կամ անգործության համար, որոնք դրանց կատարման պահին հանցագործություններ չեն հանդիսացել: Չի կարող նշանակվել հանցանքը գործելու պահին սահմանվածից ավելի ծանր պատիժ:

Քրեական օրենսգիրք, հոդված 10. Քրեական օրենքի հետադարձ գործողությունը

1) Արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն:
2) Արարքի համար սահմանված պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը հետադարձ ուժ չունի:

ՆՈՐՎԵԳԻԱ

Սահմանադրություն, հոդված 97

Օրենքը չի կարող հետադարձ կիրառություն ունենալ:

Քրեական օրենսգիրք, 3-րդ մաս

§ 3. Եթե քրեական օրենսդրությունը փոփոխվել է արարքի կատարմանը հաջորդած ժամանակահատվածում, ապա արարքի նկատմամբ կիրառվում են դրա կատարման պահին գործող քրեական դրույթները, եթե այլ բան նախատեսված չէ:
Կոնկրետ հարցով որոշում կայացնելու պահին գործող քրեական դրույթները կիրառելի են այն դեպքում, երբ դրանց արդյունքում կայացվող որոշումն ավելի բարենպաստ է մեղադրյալի համար, քան արարքի կատարման պահին գործող դրույթների հիման վրա կայացվող որոշումը: Այնուհանդերձ, վերաքննիչ բողոքի, միջանկյալ ակտի դեմ ներկայացված բողոքի կամ գործը վերաբացելու միջնորդության դեպքում հաշվի չեն առնվում այն դրույթները, որոնք ուժի մեջ են մտնում որոշման կայացումից հետո, որի դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք, միջանկյալ ակտի դեմ ներկայացված բողոք կամ գործը վերաբացելու միջնորդություն:
Եթե քրեական հետապնդումը կամ պատժի ի կատար ածումն օրինական կարգով սկսվել է, ապա հաշվի չի առնվում այն փաստը, որ ավելի ուշ ընդունված օրենքով վաղեմության ժամկետի հիմքով արգելվում է քրեական հետապնդումը կամ պատժի ի կատար ածումը, կամ քրեական հետապնդումը կախվածության մեջ է դրվում անձի կողմից ներկայացվող բողոքից կամ անձի գործողություններից:
Քրեական հետապնդման կամ կայացված որոշումը կիրառելու՝ անձի իրավունքի նկատմամբ նոր օրենքով սահմանված ժամկետի հաշվարկը սկսվում է միայն տվյալ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո:

ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱ

Սահմանադրություն, հոդված 29, 4-րդ մաս

Ոչ ոք չի կարող ենթարկվել պատժի կամ խափանման միջոցի, որն ավելի ծանր է, քան տվյալ արարքը կատարելու պահին կամ միջոցի կիրառության նախապայմանների բավարարման պահին սահմանված պատիժը կամ խափանման միջոցը: Այնուհանդերձ, քրեական օրենքները, որոնց բովանդակությունն ավելի բարենպաստ է ամբաստանյալի նկատմամբ, կիրառվում են հետադարձ կարգով:

ՌՈՒՄԻՆԻԱ

Սահմանադրություն, հոդված 15, 2-րդ մաս

Օրենքը տարածվում է միայն ապագայի նկատմամբ, բացառությամբ ավելի բարենպաստ քրեական կամ վարչական օրենքի:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրություն, հոդված 54, 2-րդ մաս

2. Ոչ ոք չի կարող պատասխանատվության ենթարկվել այնպիսի գործողության համար, որը դրա կատարման պահին չի համարվել հանցագործություն: Եթե օրենքը խախտելուց հետո պատժելիությունը վերացվել է կամ սահմանված պատիժը՝ մեղմվել, ապա կիրառվում է նոր օրենքը:

ՍԱՆ ՄԱՐԻՆՈ

Հիմնարար իրավունքները, հոդված 15, 4-րդ մաս

Պատիժները, որոնք իրենց բնույթով պետք է լինեն մարդասիրական և ուղղիչ, կարող են կիրառվել միայն օրենքի համաձայն ստեղծված դատարանի կողմից՝ միմիայն օրենսդրության հիման վրա, առանց հետադարձ կիրառության:

Քրեական օրենսգիրք, հոդված 3

Ոչ ոք չի կարող պատժվել այնպիսի արարք կատարելու համար, որը դրա կատարման պահին չի հանդիսացել հանցագործություն: Անձը չի կարող արարքը կատարելու պահին սահմանված պատժից ավելի ծանր պատժի ենթարկվել: Նոր օրենքը, որով վերացվում է արարքի պատժելիությունը, ունի հետադարձ կիրառություն, իսկ եթե կայացվել է մեղադրական դատավճիռ, ապա դրա ի կատար ածումը և հետևանքները դադարում են: Նոր օրենքը, որն ավելի բարենպաստ է մեղադրյալի համար, ունի հետադարձ կիրառություն, բացառությամբ երբ առկա է օրինական ուժի մեջ մտած դատավճիռ: Դատավորը, նույնիսկ՝ գործելով սեփական նախաձեռնությամբ, վերանայում է մեղադրական դատավճռով նշանակված պատիժները, երբ նոր օրենքով սահմանվում է երկու աստիճանով ավելի մեղմ պատիժ:

ՍԼՈՎԱԿԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրություն, հոդված 50 (6)

Արարքի հանցավորությունը գնահատվում, իսկ պատիժը՝ որոշվում է այն օրենքով, որը գործել է արարքը կատարելու պահին: Ավելի ուշ ընդունված օրենքը կիրառվում է, եթե այն ավելի բարենպաստ է արարքը կատարած անձի համար:

ՍԼՈՎԵՆԻԱ

Սահմանադրություն, հոդված 28. Օրինականության սկզբունքը քրեական օրենսդրության մեջ

Ոչ ոք չի կարող պատժվել այնպիսի արարքի համար, որը դրա կատարման պահին օրենքով նախատեսված չի եղել որպես քրեական հանցագործություն, կամ որի համար դրա կատարման պահին նախատեսված չի եղել պատիժ:

Հանցավոր արարքները սահմանվում, իսկ դրանց համար նշանակվող պատիժները՝ սահմանվում են այն օրենքով, որը գործում է արարքը կատարելու պահին, բացառությամբ երբ ավելի ուշ ընդունված օրենքն ավելի մեղմ է իրավախախտի նկատմամբ:

ԻՍՊԱՆԻԱ

Սահմանադրություն, հոդված 25

1. Անձի նկատմամբ չի կարող կայացվել մեղադրական դատավճիռ կամ նշանակվել պատիժ այնպիսի գործողության կամ բացթողման համար, որը դրա կատարման պահին գործող օրենքով չի հանդիսացել ծանր կամ ոչ ծանր հանցագործություն կամ վարչական իրավախախտում:

Քրեական օրենսգիրք, հոդված 2

§ 2. Օրենքներից շեղումները սահմանվում են ավելի ուշ ընդունվող օրենքներով: Շեղումները սահմանվում են բացառապես նոր օրենքի դրույթների հիման վրա և կիրառելի են նույն խնդրո առարկայի վերաբերյալ նախկինում գործած օրենքի՝ նոր ընդունված օրենքին անհամատեղելի բոլոր դրույթների նկատմամբ: Կատարելով պարզ շեղում օրենքից, նախկինում ուժը կորցրած դրույթներն ուժի մեջ չեն մտնում:

ՇՎԵԴԻԱ

Գլուխ 2, հոդված 10 § 1. Կառավարության իրավասությունը

Հոդված 10. Որևէ պատիժ կամ քրեական պատժամիջոց չի կարող նշանակվել այնպիսի արարքի նկատմամբ, որի համար դրա կատարման պահին սահմանված չի եղել քրեական պատիժ: Չի կարող կիրառվել որևէ քրեական պատիժ, որն ավելի ծանր է, քան արարքը կատարելու պահին սահմանված պատիժը: Քրեական պատիժների նկատմամբ սույնով նախատեսվող դրույթները նմանապես կիրառելի են նաև բռնագանձման և հանցագործության հետ առնչվող այլ՝ հատուկ իրավական հետևանքների նկատմամբ:

ՇՎԵՅՑԱՐԻԱ

Դաշնային քրեական օրենսգիրք, հոդված 2

1. Sera jugée d'après le présent code toute personne qui aura commis un crime ou un délit après l'entrée en vigueur de ce code.
2. Le présent code est aussi applicable aux crimes et aux délits commis avant la date de son entrée en vigueur, si l'auteur n'est mis en jugement qu'après cette date et si le présent code lui est plus favorable que la loi en vigueur au moment de l'infraction

ԹՈՒՐՔԻԱ

Սահմանադրություն, հոդված 38

Ոչ ոք չի կարող պատժվել այնպիսի արարքի համար, որը դրա կատարման պահին գործող օրենքով չի հանդիսացել քրեական հանցագործություն: Հանցագործության համար անձի նկատմամբ չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն պատիժն է, որը գործել է հանցանքը գործելու պահին:

Քրեական օրենսգիրք, հոդված 7

(1) Անձի նկատմամբ չի կարող կիրառվել պատիժ կամ խափանման միջոց այնպիսի արարքի համար, որն արարքը կատարելու պահին գործող օրենքով չի հանդիսանում քրեական հանցագործություն: Բացի այդ, անձի նկատմամբ չի կարող կիրառվել պատիժ կամ խափանման միջոց այնպիսի արարքի համար, որն արարքը կատարելուց հետո ուժի մեջ մտած օրենքի համաձայն չի հանդիսանում հանցագործություն: Երբ նշանակվել է նման պատիժ կամ խափանման միջոց, դրա ի կատար ածումը և իրավական հետևանքները միանգամից դադարում են:
(2) Եթե առկա են տարբերություններ հանցանքը գործելու պահին գործող օրենքի դրույթների և ավելի ուշ ընդունված օրենքի դրույթների միջև, կիրառվում և գործում է այն օրենքը, որն ավելի բարենպաստ է հանցանքը գործած անձի համար:
(3) Մեղադրական դատավճռի կայացման պահին գործող օրենքը կիրառվում է խափանման միջոցների ի կատար ածման նկատմամբ:
(4) Մշտական կամ ժամանակավոր օրենքները շարունակում են կիրառվել այն հանցագործությունների նկատմամբ, որոնք կատարվել են տվյալ օրենքների գործողության ժամանակահատվածի ընթացքում:

ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Մարդու իրավունքների մասին օրենք, հոդված 7

1. Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը, կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, քրեական հանցագործություն չի համարվել: Չի կարող նաև նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի է եղել քրեական հանցագործության կատարման պահին:
2. Սույն հոդվածը չի խոչընդոտում ցանկացած անձի դատի տալ և պատժել որևէ գործողության կամ անգործության համար, որը կատարվելու պահին, քաղաքակիրթ ազգերի կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքներին համապատասխան, համարվել է քրեական հանցագործություն:

ՈՒԿՐԱԻՆԱ

Սահմանադրություն, հոդված 58

Օրենքները և այլ նորմատիվային իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն, բացառությամբ երբ դրանք մեղմում կամ վերացնում են անձի քրեական պատասխանատվությունը:
Ոչ ոք չի կարող պատասխանատվության ենթարկվել այնպիսի արարքների համար, որոնք դրանց կատարման պահին օրենքով չեն համարվել հանցագործություններ:

Այնպիսի պետությունների սահմանադրությունների կամ քրեական օրենսգրքերի դրույթներ, որոնցով չի նախատեսվում ավելի բարենպաստ օրենքի հետադարձ կիրառության սկզբունքը

ՖԻՆԼԱՆԴԻԱ

Քրեական օրենսգիրք, բաժին 8. Քրեական գործերով օրինականության սկզբունքը

Ոչ ոք չի կարող մեղավոր ճանաչվել կամ պատժի ենթարկվել այնպիսի արարքի համար, որը դրա կատարման պահին գործող օրենքով չի համարվել պատժելի արարք: Հանցագործության համար նշանակված պատիժը չի կարող ավելի ծանր լինել, քան հանցանքը կատարելու պահին գործող օրենքով սահմանված պատիժը:

ԻՍԼԱՆԴԻԱ

Սահմանադրություն, հոդված 69

Ոչ ոք չի կարող ենթարկվել պատժի, եթե նա մեղավոր չի ճանաչվել այնպիսի գործողության համար, որը քրեական հանցագործություն է հանդիսացել դրա կատարման պահին զգործող օրենքով կամ բացարձակ համարժեք է այդ գործողությանը: Պատիժները չեն կարող արարքը կատարելու պահին սահմանված պատժից ավելի ծանր լինել:

ԻՌԼԱՆԴԻԱ

Սահմանադրություն, հոդված 15 § 5 1°

Ազգային խորհրդարանը չի կարող արարքները ճանաչել որպես օրենքի խախտումներ, եթե այդ արարքները դրանց կատարման պահին ճանաչված չէին որպես օրենքի խախտումներ:

ՄԱԼԹԱ

Սահմանադրություն, հոդված 39, 8-րդ մաս

Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին քրեական հանցագործություն չի համարվել: Չի կարող նաև նշանակվել աստիճանով կամ նկարագրությամբ ավելի ծանր պատիժ, քան այն առավելագույն պատժաչափը, որը կարող էր նշանակվել արարքի կատարման պահին:

ՉԵՌՆՈԳՈՐԻԱ

Սահմանադրություն, հոդված 33

Ոչ ոք չի կարող կատարվել այնպիսի արարքի համար, որը նախքան դրա կատարումն օրենքով նախատեսված չի եղել որպես պատժելի արարք: Բացի այդ, չի կարող նշանակվել այնպիսի պատիժ, որը տվյալ արարքի համար նախատեսված չի եղել:

ԼԵՀԱՍՏԱՆ

Սահմանադրություն, հոդված 42, 1-ին մաս

Քրեական պատասխանատվության կարող է ենթարկվել միայն այն անձը, ով կատարել է դրա կատարման պահին գործող օրենքով արգելված և պատժելի արարք: Այս սկզբունքը չի բացառում այնպիսի արարքի համար պատժի նշանակումը, որը դրա կատարման պահին հանդիսացել է հանցագործություն միջազգային իրավունքի իմաստով:

Քրեական օրենսգիրք, հոդված 1

Հոդված 1, 1-ին մաս: Քրեական պատասխանատվության կարող է ենթարկվել միայն այն անձը, ով կատարել է դրա կատարման պահին գործող օրենքով արգելված և պատժելի արարք:

“Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետություն”

Քրեական օրենսգիրք, հոդված 1

Անձի նկատմամբ պատիժ կամ քրեական որևէ պատժամիջոց չի կարող նշանակվել այնպիսի արարքի համար, որը դրա կատարումից առաջ օրենքով սահմանված չի եղել որպես հանցագործություն, և որի համար դրա կատարումից առաջ օրենքով սահմանված չի եղել պատիժ: